թարգմանական յօդուածների համար՝ 10 աստիճանի տարով երեսը 60 կոպ., իսկ 12 աստիճանի՝ 45 կոպ.։ 10 ապրիլ. թ. 557։

Դիւանի գրութեամբ յանձնարարուեց Պարսկա-Հընդկաստանի առաջնորդական խորհրդարանին՝ բացատրութիւն պահանջել Խորէն վարդապետից, որ Գիւլբանդ Սարգարեանի տանից վերցրել է մի ձեռագիր աւետարան և մինչև օրս ոչ վերադարձրել է և ոչ էլ յանձնել ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանին։ 10 ապրիլ. թ. 560։

ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՆԵՐԻՑ ՔԱՂՈՒԱԾՆԵՐ

Սինօդը քննութեան առնելով իւր եղբակացութեան ուղարկած դեպարտամենտի փետր. 11-ին թ. 1500 գրութիւնը և յարակից թղթերը Ս. Պետերբուրգի և Մոսկվայի հայ հոգևորականների ռոճկի առիթով, գտնում է, որ եկեղեցիների ընդհանուր կառավարութիւնը պատկանում է եկեղեցու խորհրդին (XI հատ. I մ. յօդ. 1237, հրատ. 1896), որտեղ քննւում ու կազմւում է իւրաքանչիւր եկող տարուայ համար նախահաշիւ։ Հոգաբարձուն առանձին մասնակցութիւն չունի եկեղեցական գոյքերի կառավարութեան գործում։ Նա մասնակցում է միայն որպէս նախագահ խորհրդի։ Եւ առհասարակ Հոգաբարձուն հանդիսանում է որպէս խորհրդի ներկայացուցիչ պետ. հաստատութիւնների և այլ անձանց մօտ։ Խորհրդի կազմած նախահաշիւը կարող է գործադրուել միմիայն թեմական Առաջնորդի կողմից հաստատուելուց յետոյ։ Եկեղեցական կալուածների և առհասարակ եկեղեցական. տնտեսութեան և վարչութեան (управл.) հետ կապուած բոլոր գործերը, որոնց թւում և նախահաշիւը, իրանց վերջնական լուծումն են ստանում, երբ մշակւում կազմւում են խորհրդի կողմից և հաստատւում թեմական Առաջնորդից։ Ասանց այս երկու ինստանցիան անցնելու եկեղեցու տնտեսութեան և վարչութեան հետ կապուած ոչ մի գործ չէ կարող ծագել

և վախճանական լուծումն ստանալ։ Եկեղեցական խորհուրդն կազմում է իւրաքանչիւր տարուայ նախահաշիւր։ Այդ նախահաշուի եղքի բաժնում մտնում է նաև Հոգևոր կառավարութեան, հոգևորականների և եկեղեցու ծառայողների պահպանութեան ծախքը, այն չափովինչ չափով եղել է մինչև Բարձրագոյն հաստատուած 1883 թ. 18 նոյեմբ. հրատարակած օրէնքը։ Իսկ եթէ այդ ընդունուած չափից դուրս խորհուրդը նախահաշուի մէջ աւելացնում կամ պակասեցնում է հոգևորականութեան պահպանութեան ծախքը՝ պարտաւոր է նախօրօք ստանալ այդ մասին Հոգաբարձուի համաձայնութիւնը, ապա ուղարկել ի հաստատութիւն թեմական Առաջնորդի։ Սրբեմն ըստ վերոյիշեալ պատուղութեանց Սինոդը եզրակացնում է, որ հոգևորականների պահպանութեան ծախքն աւելացնելու կամ պակասացնելու խնդիրը ծագում և քննւում է միմիայն եկեղեցական խորհրդում, մտնում է իւրաքանչիւր տարուայ նախահաշուի մէջ միայն խորհրդի կողմից, նախօրօք ստանալով իշխան Հոգաբարձուի համաձայնութիւնը՝ և որից յետոյ ամբողջ նախահաշիւը ուղարկուում է ի հաստատութիւն թեմական Առաջնորդի։ Իսկ Հոգաբարձուի 1906 թ. կազմած ռոճիկների շտատը հաստատուած Առաջնորդից՝ որպէս նախօրօք քննութեան չենթարկած և չբկազմած եկեղեցական խորհրդում՝ Սինոդը գտնում է, որ այդ ձևի գործողութիւնը հակասում է հիմնական օրէնքի XI հատ I մ. հրատ. 1896 յօդ. 1237 և հրահանգի § 1 յօդ. ը կէտի և 60-րդ յօդուածին։

Թ. 171/9 ապրիլի Սինոդը՝ լսելով Ղարաբաղի կոնսիստորեայի փետրուարի 15-ին № 392 յայտարարութիւնը նուխու գաւառի Խանաւադ գիւղի բնակիչ Մերդէյ Եղիազարեանցի և Զանազան Աթանասեանցի չհաս պսակը թոյլ տալու մասին, որոշեց թոյլ տալ վերոյիշեալ խօսեցեալների պսակը վեցերորդ աստիճանի ազգականութեան հանդերձ խորթութեամբ։

Թ. 172/9 ապրիլի Սինոդը՝ լսելով Ղարաբաղի կոն-

սիստորիայի փետրուարի 11-ի № 347 յայտարարութիւնը Ղայաբաշ գիւղի բնակիչ Գրիգոր Ղարիբեանցի և Ջաւահիր Գրիգորեանցի չհաս պահակը թոյլ տալու մասին, որոշեց՝ թոյլ տալ յիշեալ Ղարիբեանի և Գրիգորեանի պահակը, որը գտնւում է վեցերորդ ատիճան ազգականութեան հանդերձ խորդութեամբ:

Թ. 158 ապրիլի 3. Մինօդը՝ լսելով Աթոռապատկան Մեհրար-Փիւրդ-քեանդ և Թափաբաշ գիւղերի մօտ գտնւող աղջայ հողը և բահրան վարձով տալու գործը՝ որոշեց. թոյլ տալ Երևանի փոխ-թեմակալին տուանց ուճուրդի վարձով տալ Աթոռապատկան Մեհրար-Փիւրդ քեանդ և Թափաբաշ գիւղերում գտնւող տասն և մէկ դեսեատին աղջայ հողը 714 ռ. 50 կ. հինգ տարի ժամանակով 1913 թուից:

Թ. 159 ապրիլի 3. Մինօդը՝ լսելով Էջմիածնի գաւառի Բիւրական գիւղի եկեղեցական-ծխական դպրոցի Հոգաբարձութեան խնդիրը, որով Հոգաբարձութիւնը խնդրում է իրենց դպրոցին որոշուած Մայր Աթոռի կողմից մի հարիւր ռուբլի նպաստը այս ուսումնական տարուայ համար յանձնել Հոգաբարձութեանը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին փոխադրել Երևանի փոխ թեմակալի անունով Բիւրականի ծխական դպրոցի 1912/13 ուսումնական տարուայ նպաստը մի հարիւր ռուբլի՝ յիշեալ դպրոցի Հոգաբարձութեանը հասցնելու համար:

Թ. 162 ապրիլի 3. Մինօդը՝ լսելով Երևանի կոնսիստորիայի այս տարուայ փետրուարի 9-ին № 752 յայտարարութիւնը, որով յայտնում է, թէ վերջին տարիները Էջմիածնի գաւառի Սամադար գիւղից յաճախ անցնում են Ալէքսանդրապօլի գաւառի վերին և ներքին Ղանլիճա, Աղին, Զիթիհանքով և այլն գիւղերը հայբողոքական քարոզիչներ, որոնք իրենց քարոզներով յիշեալ գիւղերի երիտասարդներից շատերին գլխահան են անում, այդպիսով երկրպառակութիւն սերմանում թէ գիւղի և թէ ընտանիքների մէջ, որոշեց. թոյլ տալ Երևանի կոնսիստորիային ուղարկել Ալէքսանդրապօլի քահանաներից մի պատրաստուած անձնաւորութեան Ղանլիճա գիւղի բողոքականու-

թեան տարածման առաջն առնելու համար, իսկ Ազինի Զիթիհանքովի համար յիշեալ քարոզի գործը յանձնարարել Զիթիհանքովի, միանգամայն պատրաստել հայ քահանային։ Բողոքականների և կաթոլիկների հակաօրինական ընթացքի մասին խնդրել Երևանի նահանգապետի տնօրէնութիւնը, այդ մասին յայտնելով կաթոլիկ և բողոքական հոգևոր իշխանութիւններին։

Թ. 165 ապրիլ 5. Սինոդը՝ լսելով Էջմիածնի գաւառի Մատտարա գիւղի եկեղեցական-ծխական դպրոցի Հոգաբարձութեան խնդիրը, որով Հոգաբարձութիւնը խնդրել էր տալ իրենց դպրոցի շինութեան համար Մայր Աթոռի կողմից որոշուած 300 ռ. նպաստը, որոշեց. պատուիրել Մայր Աթոռի գանձապահին փոխադրել Երևանի Տ. Փոխ-Թեմակալի անունով Մատտարա գիւղի եկեղեցական-ծխական դպրոցի շինութեան համար որոշուած հինգ հարիւր ռուբլուց մնացած 300 ռուբլին։

Թ. 167 ապրիլ 5. Սինոդը՝ լսելով կալուածների կառավարիչ Լ. Տ. Աւետիքեանի յայտարարութունը իշխան Սումբատովի Տփխիսում Սերեբրեանայա փողոցում գտնուող խանութին կից վանքապատկան խանութը փոխելու թոյլատուութեան մասին, որոշեց. թոյլ տալ կալուածների կառավարչին Երուսաղէմեան փողոցում գտնուած Էջմիածնապատկան խանութը փոխել Սումբատովին պատկանող խանութի հետ։

Թ. 169 ապրիլ 9. Սինոդը՝ լսելով Կարսի շրջանի ճալա գիւղի ծխականների Վեհափառ Կաթուղիկոսի անունով տուած խնդիրը, որով նոքա խնդրում են Ցաճկատանում ձեռնադրուած իրենց համագիւղացի Գէորգ քահանայ Փաղցրիկեանին թոյլ տալ հովուել իրենց, որոշեց. պատուիրել Երևանի կոնսիստորիային համարելու Գէորգ քահանայ Փաղցրիկեանին ճալա գիւղի ծխատէր, որովհետև յիշեալ քահանան Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով արդէն նշանակուած է ճալա գիւղի ծխատէր։

Թ. 180 ապրիլ 24 Սինոդը՝ լսելով Հառիճի վանքի

Հոգաբարձութեան Նորին Սրբութեան անունով տրուած խնդիրը, որով Հոգաբարձութիւնը նկարագրելով վանքի և դպրոցի նիւթական սուղ դրութիւնը՝ խնդրում է անպահանջ թողնել Հառիճի վանքի պարտքը, մի հազար ինն հարիւր ռուբլի, որոշեց հանել Հառիճի վանքի պարտքից վանքին հասանելիք ութ հարիւր յիսուն ռուբ. և պահանջել վանքից մնացած պարտքը մի հազար յիսուն ռուբլի, որի համար և յայտնել Հոգաբարձութեանը Երևանի կոնսիստորիայի միջոցով։

Թ. 182 ապրիլ 26/27 Սինոդը՝ լսելով կարուածների կառավարիչ Լ. Տէր Աւետիքեանի անցեալ տարուայ դեկտեմբերի 10-ի № 217 յայտարարութիւնը Գանձասարի վանքի երկանաքարի հանքը նորից հինգ տարի ժամանակով աճուրդով տալու մասին, որոշեց. ի նկատի ունենալով, որ Սինոդիս յունուարի 28-ի № 190 առաջարկութեան բաւարար պատասխան մինչև այժմ չէ ստացուել Ղարաբաղի թեմի ժամանակաւոր կառավարիչ Զաւէն վարդապետից և պայմանի ժամանակը լրանում է մայիսի 1-ին, գտնելով ձեռնտու և ընդունելի կարուածների կառավարչի առաջարկը, թոյլ տալ վերջնիս առանց աճուրդի տալ Գանձասարի երկանաքարի հանքը Սբրահամ բէկ Հասան Զալալեանին հինգ տարի ժամանակով տարեկան մի հազար եօթ հարիւր ռուբլի կապալավարձով և կապել Հասան—Զալալեանի հետ համապատասխան նոտարական պայմանագրութեան։

Թ. 185. ապրիլ 26–1 մայիսի. Սինոդը՝ քննելով և որոշ փոփոխութիւններ անելով Մայր Աթոռի հաստատութիւնների, կանխատորիանների, Հոգևոր կառավարութիւնների և վանքերի 1913 թուի նախահաշիւների գործը՝ որոշեց. ներկայացնել Նորին Սրբութեան փոփոխուած նախահաշիւները ի հաստատութիւն և Նորին Սրբութեան հաճութիւնը ստանալուց յետոյ ուղարկել ըստ պատկանելոյն ի ճիշտ գործադրութիւն, առաջարկելով նախահաշուից դուրս և առանց Սինոդի կանխագոյն թոյլտուութեան ոչ մի ծախք չանել։

Թ. 187 ապրիլ 29/50 Մինչդը լսելով Նորին Սրբութեան այս տարուայ մարտի 19-ի № 461 կոնդակը, որի հետ ուղարկելով Ներքին գործերի Նախարարի նոյն մարտի 11-ի № 2487 գրութեան պատճէնը, Ռեստարաբեայի և Ատրախանի թեմերում փոխանորդներ նշանակելու մասին որոշեց. ի նկատի ունենալով, որ Ներքին Գործոց Նախարարից ստացուած է արդէն թոյլատուութիւն նշանակելու փոխանորդներ Ռեստարաբիայի և Ատրախանի թեմերում, համարել վերահաստատուած Ղզլարի և Նոր Նախիջևանի փոխանորդութեան պաշտօնները և խնդրել Վեհափառ Կաթուղիկոսին նշանակել յիշեալ փոխանորդութեանց պաշտօնների համար փոխանորդներ։